ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«7» հունվարի 2026 թվականի N: 5 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N:7-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 5-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 18-րդ հոդվածների, «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N:737-Ն որոշման N 1 հավելվածի 84-րդ կետի, N 2 հավելվածի 12-րդ, 13-րդ, 16-րդ, 18-րդ և 20-րդ կետերի դրույթները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի 2026 թվականի հաստիքացուցակը 98 հաստիքային միավորի համար՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2025 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

աշխատակազմի 2025 թվականի հաստիքացուցակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի հունվարի 3-ի N:1-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N:7-Ա որոշումը:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝